ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Պրոբացիայի պետական ծառայության և ՊՎԱ համակարգի զարգացումը և ներկա մարտահրավերները

«Chatham House» ձևաչափով փորձագիտական հանդիպման Արդյունքների վերլուծություն

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «Աստղացոլք» ՀԿ-ի, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Քայլ դեպի արդար Հայաստան» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Մարտի 11-ին «Աջակցություն պրոբացիային ազգային ցանց»-ը՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համագործակցությամբ, կազմակերպել էր Կլոր սեղան-քննարկում՝ Chatham House ձևաչափով (առանց հողումների իրավունքի): Թեման էր՝ «Պրոբացիայի պետական ծառայության համակարգի զարգացումը և ներկա մարտահրավերները»:

Քննարկմանը մասնակցում էին՝ ՀՀ Արդարադատության նախարարության Պրոբացիայի պետական ծառայության պետը և աշխատակիցները, ինչպես նաև Ազգային Ժողովի պատգամավորներ, պատգամավորների օգնականներ և ներկայացուցիչներ Ցանցի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններից:

Կլոր սեղան-քննարկման բանախոսներն էին՝ ԱՆ Պրոբացիայի պետական ծառայության պետ Արսեն Նավասարդյանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող-խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Գոհար Սիմոնյանը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Գալստյանը և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն Արտակ Կիրակոսյանը, ով հանդիսանում է նաև «Աջակցություն պրոբացիային ազգային ցանց»-ի կառավարման խորհրդի նախագահը:

Քննարկվեցին Հայաստանում Պրոբացիայի և ՊՎԱ համակարգի ներդրման արդյունավետ մեխանիզմները, ոլորտում միջազգային փորձը: Մասնավորապես քննարկվեցին ՔՀԻ կողմից, արդարադատության նախարարի խնդրանքով դեռևս 2017 թ-ին մշակված առաջարկները.

- Մշակել ռազմավարական և իրականացման ծրագիր
- Հաջողել ՊՎԱ-ն

- Փորձարկել (պիլոտային) ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը
- Փորձել պատիժը պայմանական չկիրառելն ազատազրկման փոխարեն
- Ավելացնել համագործակցությունը արդարադատության ոլորտի գործընկերների և ծառայություն մատուցողների (ՏԻՄ-եր, ՀԿ-ներ) միջև
- Ուշադրություն դարձնել պրոբացիայի ծառայողների վերապատրաստմանը և նրանց աշխատանքային միջավայրին
- Զգույշ մոտենալ էլեկտրոնային մոնիթորինգին
- Հաշտարարությունը հանել առաջնահերթությունների ցանկից
- Դառնալ ԵՊԿ (CEP) անդամ

Վկայակոչվեց համաշխարհային հանրության ընդունված տեսանկյունը ՊՎԱ ինստիտուտի նպատակների մասին. «… պայմանական ազատումը կրկնահանցագործության կանխարգելման և վերաբնակեցման խթանման ամենաարդյունավետ և կոնստրուկտիվ ձևն է, որն ապահովում է ազատազրկվածի պլանավորված, աջակցվող և վերահսկվող վերաինտեգրումը համայնքում»; «Պայմանական ազատումը պեք է նպատակ հետապնդի ազատազրկվածին աջակցելու անցում կատարել բանտի կյանքից դեպի համայնքում օրինապահ կյանքի՝ հետ-ազատման պայմանների և վերահսկողության միջոցով, որը նպաստում է հանրության անվտանգությանը եւ համայնքում հանցագործությունների կրճատմանը»[1]

Հիմնվելով վերոնշյալ առաջարկների, դրանցից հետո տեղի ունեցած փոփոխությունների և այդ փոփոխությունների դինամիկայի վրա (փոփոխությունների դինամիկայի մասին մանրամասն պատկեր է տալիս «Քայլ դեպի

[1] Առաջարկներ վաղաժամկետ ազատման շուրջ, Եվրոպայի Խորհուրդ, 2003

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

արդար հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգը)՝ մշակվեց ոլորտի զարգացման մասնակիցների տեսլականը, որը ներկայացնում ենք ստորև.

- Զարգացնել ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը և ադապտացնել այն՝ դարձնելով չորս ոլորտներում կիրառելի (մինչդատական զեկույց; վերահսկողություն ազատազրկման հետ չկապված պատժի դեպքում; նախապատրաստում վաղաժամկե ազատման; վերահսկողություն ազատումից հետո):
- Շարունակել պրոբացիայի աշխատակիցների հմտությունների զարգացմանն ուղղված ներդրումներ կատարելը: Սա կբերի ծառայության առավել բարձր դիրքի (կարգավիճակ) և ամբողջ արդարադատության համակարգի վրա առավել մեծ ազդեցության:
- Սկսել ՊՎԱ-ին առնչվող հարցերի շուրջ համագործակցել այլ նախարարությունների/ ՏԻՄ-երի/ ծառայություններ մատուցողների հետ:
- Հասկանալ, թե ինչպես ՊՎԱ համակարգը կինտեգրվի ՔԿԾ-ի՝ դատապարտյալներին ազատմանը պատրաստելու ապագա քաղաքականությանը (օր՝ ազատմանը պատրաստելու ընթացքում դատապարտյալների աստիճակնական անցումը համամատաբար ծանրից ավելի թեթև ռեժիմներին):

Ամփոփելով քննարկումը նշվեց, որ անհրաժեշտ է շարունակել համագործակցությունը Պրոբացիայի կայացման նպատակով: